ԱԿՏ

21.03.2011թ. **գ. Սարատովկա**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական և վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի (ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20-Ա հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն) համաձայն, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ.Բերոյանս, իրավաբանական բաժնի պետ՝ Ա. Սահակյանս, ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս և ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս Սարատովկայի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական և վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Սարատովկայի գյուղապետ Գ. Մարդոյանը, աշխատակազմի քարտուղար՝ Հ. Ղևոնդյանը և հաշվապահ Է. Բարսեղյանը:

Գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասինե, «ՀՀ բյուջետային համակարգի մասինե և «Համայնքային ծառայության մասինե ՀՀ օրենքներով, գյուղապետարանի կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

Ստուգումը սկսվել է 17.03.2011թ.-ին, ավարտվել է 21.03.2011թ-ին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

2010թ. վարչական բյուջեով նախատեսված 12542.9 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 9061.1 հազ. դրամ, կամ կատարվել է 72.2%-ով: Վարչական բյուջեի սեփական եկամուտները նախատեսված են 9621.5 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 6139.7 հազ. դրամ կամ կատարվել են 63.8%-ով կամ նախատեսվածից պակաս է հավաքագրվել 3481.8 հազ. դրամ սեփական եկամուտներ:

(հազ. դրամ)

Բյուջետային մուտքերի անվանումը	2010 թվական		
	նախատեսված է	*փաստացի կատարվել է*	*կատարման տոկոս*
Հողի հարկ	6590.2	3998.3	60.7
Գույքահարկ	276.2	453.4	164.2
Տեղական տուրք	85.0	40.0	47.1
Պահուստային հողերի վարձավճարներ	2670.1	1648.0	61.7
ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**9621.5**	**6139.7**	**63.8**
Պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ	2321.4	2321.4	100.0
ՏԻՄ պատվիրակված լիազորություն (անասնաբույժ)	600.0	600.0	100.0
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**12542.9**	**9061.1**	**72.2**

Առավել ցածր է տեղական տուրքերի գանձման ցուցանիշները (47.1%): Նախատեսված 85.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 40.0 հազ. դրամ, կամ որոշ տնտեսվարող սուբյեկտները վարել են անօրինական գործունեություն՝ չունենալով ծխախոտ և ալկահոլային խմիչքներ վաճառելու համապատասխան թույլտվություն: Համայնքի ղեկավարի կողմից չի կատարվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ի կետ 1-ի և 2-ի պահանջները, համաձայն որի առևտրի և

ծառայությունների ոլորտում օրենքի պահանջների նկատմամբ հսկողությունը իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինը, որը իր լիազորությունների սահմաններում առևտրի օբյեկտներում անօրինական գործունեություն վարելու համար կարող է կատարել ստուգումներ և նշանակել համապատասխան տուգանքներ:
Նախորդ տարիներին բյուջեի պարբերաբար թերակատարման հետևանքով առաջացել են ապառքներ, այդ թվում՝ հողի հարկից՝ 6590.0 հազ. դրամ, գույքահարկից՝ 260.6 հազ. դրամ, պահուստային հողերի վարձակալությունից՝ 2670.0 հազ. դրամ:
Յուրաքանչյուր ամիս չի տարվում հողի հարկի և գույքահարկի օգտագործված անդորրագրեի, գանձված և բանկ մուծված գումարների հաշվառում:

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

2010 թվականին դրամարկղային ծախսերը կազմել են 9061.1 հազ. դրամ, այդ թվում՝ աշխատավարձ և հավելավճարներ՝ 5323.9 հազ. դրամ, պարգևատրություն՝ 150.0 հազ. դրամ, սոցիալական ապահովության վճարներ՝ 1201.0 հազ. դրամ, էներգետիկ ծառայություն՝ 60.0 հազ. դրամ, տեղեկատվական ծառայություններ՝ 22.0 հազ. դրամ, գրասենյակային ապրանքներ՝ 50.0 հազ. դրամ, տրանսպորտային նյութեր՝ 1175.0 հազ. դրամ (150.0 հազ. դրամը՝ պահեստամասեր, 500.0 հազ. դրամը ավտոմեքենայի բենզինի, 525.0 հազ. դրամը՝ դիզ. վառելանյութ), հատուկ նպատակային այլ նյութեր՝ 210.1 հազ. դրամ, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 599.0 հազ. դրամ (դպրոցահասակ երեխաների տեղափոխում՝ 467.0 հազ. դրամ), սոցիալական օգնություններ՝ 210.0 հազ. դրամ, հիմնադրամներին նվիրատվություն՝ 55.0 հազ. դրամ:

Աշխատողների աշխատանքի հաճախումների տաբելները լրացվում են թերություններով՝ համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 147-րդ հոդվածի ոչ աշխատանքային տոնական և հիշատակի օրերը նախորդ աշխատանքային օրերը տևողությունը կրճատվում է մեկ ժամով, սակայն տաբելներում աշխատաժամանակը 7 ժամվա փոխարեն դրված է 8 ժամ: Խախտելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի պահանջները արձակուրդային գումարները վճարվում են ուշացումներով, ընդուված կարգի համաձայն արձակուրդային գումարները աշխատողին վճարվում են ոչ ուշ, քան արձակուրդ մեկնելուց 3 օր առաջ:

2010թ. հունվարի աշխատանքի հաճախումների տաբելում օրենսդրությամբ սահմանված ոչ աշխատանքային և տոնական օրերին գյուղապետարանի բոլոր աշխատողներին (7 օր) ներկաներ է դրված:

Արձակուրդայինների հաշվարկման ճշտությունը ստուգելու ժամանակ միջին աշխատավարձը կամ օրերը ճիշտ չի հաշվարկվել, արդյունքում պակաս է վճարվել Է. Դավոյանին՝ 1015 դրամ, Ն Ղևոնդյանին՝ 5000 դրամ, Է. Բարսեղյանին՝ 7252 դրամ, իսկ Ռ. Պողոսյանին ավելի է վճարվել 4212 դրամ:

Սոցիալական օգնությունների վճարման ժամանակ չեն լրացվում ստացողների անձնագրային տվյալները:

Գնումների կատարելու անհրաժեշտ փաստաթղթերը լրացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին ոչ համապատասխան՝ չի ընտրվել և հաստատվել գնման ձևը, բացակայում են գնման և վճարման ժամանակացույցերը, մասնակիցների որակավորման չափանիշների մասին տվյալները և այլն:

Կատարված գործարքներին չեն տրվում համապատասխան հաշվապահական ձևակերպումներ, չեն կազմվում ամսական և եռամսյակային ամփոփներ, խախտելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջները չեն կազմվում տարեկան հաշվեկշիռներ:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի տարածքում առկա երեք առևտրի կետերից, համաձայն գյուղապետի հայտարարության 2010թ-ին գործել է մեկը: 2010թ. համայնքի տարածքում սահմանվել է ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար եռամսյակը՝ 3000 դրամ, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ եռամսյակը 2000 դրամ: Համայնքում սեփական եկամուտներից ամենացածրը կազմում է տեղական տուրքերի գանձման ցուցանիշը՝ 2010թ.-ին փաստացի գանձվել է 10000 դրամ միակ գործող առևտրի օբյեկտից, որը տարվա ընթացքում պարտավոր էր մուծել 20000 դրամ, այսինքն 2-րդ կիսամյակի համար չունենալով ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն վարել է անօրինական գործունեություն կամ սահմանված կարգով չի տրվել թույլտվություն կամ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջները: 2011 թվականին համար ևս մուծում չի արվել, թույլտվություն չի տրվել: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի համաձայն պետք է իրականացվեր տնտեսվարող սուբյեկտերի նկատմամբ համապատասխան հսկողություն, որը սակայն չի կատարվել: Համայնքի ղեկավարին առաջարկվել է ապահովել տեղական տուրքերի գանձումը և իր իրավասությունների սահմաններում իրականացնել համապատասխան հսկողություն:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Սահմանված կարգով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյան: Գրանցամատյանը վարվում է որոշ թերություններով, մասնավորապես գրանցամատյանը պետք է վարվի ըստ զինապարտների ծննդյան տարեթվերի և այբբենական հերթականության:

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի ընթացքում Սարատովկա համայնքի ավագանին կայացրել է 10 նիստ, ընդունել է 23 որոշում: Մեկ անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը՝ ավագանու 4-րդ նիստը կայացել է 20.04.2010թ.-ին, իսկ 5-րդը՝ 13.07.2010թ.:

2010 թվականի ընթացքում Սարատովկա համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2011 թվայկանի համայնքի բյուջեն.

հաստատել է 2010 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

հաստատել է 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները.

որոշել է համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը.

հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները.

2011 թվականի համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատել է դրանց մեկնարկային գները.

հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

թիվ 6 որոշումով համաձայնություն է տվել համայնքի անվանափոխության վերաբերյալ պետական լիազորված մարմնի առաջարկին, թիվ 7 որոշումով անվավեր է ճանաչել թիվ 6 որոշումը.

հաստատել է հողային հաշվեկշիռը:

Թիվ 18-Ա որոշմամբ հաստատվել է համայնքային ենթակայության տակ գտնվող հիմնարկներում կատարված գույքագրման արդյունքները, այլ ոչ թե համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերը: Հաշվի առնելով, որ համայնքը չունի համայնքային ենթակայության տակ գտնվող հիմնարկ, անհրաժեշտ է համայնքի ավագանու որոշման մեջ կատարել փոփոխություն և հաստատել համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերը:

08.02.2010թ. թիվ 3-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, գյուղապետարանում փակցված է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

Համայնքի ավագանու նորմատիվ որոշումները օրենքով սահմանված կարգով ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն իրավական փորձաքննության:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ստուգման ժամանակ ավագանու որոշումներ տախտակին փակցված չէին: Ըստ աշխատակազմի քարտուղարի հայտարարության ավագանու որոշումները փակցվում են 2 շաբաթ ժամկետով, իսկ համայնքի ղեկավարի անհատական որոշումները ցուատախտակին չեն փակցվում: Առաջարկվել է համայնքի ավագանու որոշումները փակցնել ավելի երկար ժամկետով, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանող որոշումը և որոշման հավելվածը փակցրած պահել տարվա ընթացքում, ինչպես նաև ավագանու նստավայրում (գյուղապետարանում) փակցնել համայնքի ղեկավարի անհատական որոշումները:

Բացակայում է ՀՀ կառավարության 2002 թվականի թիվ 1446-Ն որոշմամբ սահմանված կարգով համայնքի աշխատակազմի իրավական ակտերի հաշվառման մատյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իրականացված վարչական վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1.ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 91 հավելվածով հաստատված Սարատովկա գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 3-ն են:

2. Համայնքի ղեկավարի 2010թ. ապրիլի 22-ի թիվ 13-Ա որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը :

3. Համայնքի ավագանու 21.12.2010թ. N 20-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և

պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոններ ի անվանացանկին:

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 07.11.2006թ. N 20-Ն հրամանով սահմանված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն աշխատանքային գրքույկներում գրառումները թերի են կատարվել, անձնական գործերի ներքին վերգիրները չեն համապատասխանում կարգի 18-րդ կետի պահանջներին: Վերը նշվածի, ինչպես նաև անձնական գործերում առկա այլ թերությունները վերացնելու համար տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ	Լ. Բերոյան	Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ
Հանձնաժողովի անդամներ	Ա. Սահակյան	Իրավաբանական բաժնի պետ
	Ժ. Ղազարյան	ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ
	Վ. Հովհաննիսյան	ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմին-ների տարածքային ստորաբաժանում-ների գործունեության համակարգման բաժնի պետ
	Գ. Մարդոյան	Սարատովկայի գյուղապետ
	Հ. Ղևոնդյան	Սարատովկայի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար
	Է. Բարսեղյան	Սարատովկայի գյուղապետարանի գլխավոր հաշվապահ

ԱԿՏ

10.03.2011թ. **գ. Ղուրսալի**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական և վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի (ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20-Ա հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն) համաձայն, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ.Բերոյանս, իրավաբանական բաժնի պետ՝ Ա. Սահակյանս, ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս և ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս Ղուրսալու գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական և վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Ղուրսալու գյուղապետ Մ. Մինասյանը, աշխատակազմի քարտուղար՝ Բ. Ավետիսյանը և աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ Ն. Ոսկանյանը:

Գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքներով, գյուղապետարանի կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

Ստուգումը սկսվել է 04.03.2011թ.-ին, ավարտվել է 10.03.2011թ-ին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

2010թ. վարչական բյուջեով նախատեսված 9683.3 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 9144.3 հազ. դրամ, կամ կատարվել է 94.4%-ով: Վարչական բյուջեի սեփական եկամուտները նախատեսված են 3097.2 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 2558.2 հազ. դրամ կամ կատարվել են 82.6%-ով: Նախատեսվածից պակաս է հավաքագրվել 539.0 հազ. դրամ սեփական եկամուտներ:

(հազ. դրամ)

Բյուջետային մուտքերի անվանումը	2010 թվական		
	նախատեսված է	*փաստացի կատարվել է*	*կատարման տոկոս*
Հողի հարկ	1490.1	1108.6	74.3
Գույքահարկ	430.6	582.2	135.2
Տեղական տուրք	210.0	94.4	45.0
Պահուստային հողերի վարձավճարներ	916.5	708.5	77.3
Այլ մուտքեր	50.0	64.6	129.2
ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**3097.2**	**2558.2**	**82.6**
Պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ	6586.1	6586.1	100.0
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**9683.3**	**9144.3**	**94.4**

Առավել ցածր է տեղական տուրքերի գանձման ցուցանիշները (45.0%): Նախատեսված 210.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 94.4 հազ. դրամ, կամ որոշ տնտեսվարող սուբյեկտները՝ «Աքուլյանի ժամ» ՍՊԸ-ն պետք է 2010թ-ին մուծեր 61.0 հազ. դրամ, սակայն գանձվել է 40.0 հազ. դրամ կամ 21.0 հազ. դրամ

մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ի կետ 1-ի և 2-ի պահանջները, համաձայն որի առևտրի և ծառայությունների ոլորտում օրենքի պահանջների նկատմամբ հսկողությունը իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինը, որը իր լիազորությունների սահմաններում առևտրի օբյեկտներում անօրինական գործունեություն վարելու համար կարող է կատարել ստուգումներ և նշանակել համապատասխան տուգանքներ:

Նախորդ տարիներին բյուջեի պարբերաբար թերակատարման հետևանքով առաջացել են ապառքներ, այդ թվում՝ հողի հարկից՝ 2056.8 հազ. դրամ, գույքահարկից՝ 95.4 հազ. դրամ, պահուստային հողերի վարձակալությունից՝ 288.0 հազ. դրամ:

Օտարումից մուտքերը 2010թ. կազմել են 4006.9 հազ. դրամ, այդ թվում՝ հողի օտարումից՝ 2006.9 հազ. դրամ, այլ հիմնական միջոցների օտարումից մուտքեր՝ 2000.0 հազ. դրամ (Ն. Պողոսյանին՝ նախկինում վարձակալ, ուղղակի վաճառքով համայնքային սեփականություն հանդիսացող արտադրական անգարը): Առկա է գույքի՝ անգարի գնահատում (եզրակացություն տրված ԱՁ Ահարոն Մակարյան: Լիցենզիա ԱԳ N0040): Առկա է նաև 31.08.2010թ. ավագանու թիվ 21 և գյուղապետի թիվ 13 որոշումները գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

Բյուջեի ծախսեր: 2010 թվականին դրամարկղային ծախսերը կազմել են 11058.0 հազ. դրամ, այդ թվում՝ աշխատավարձ և հավելավճարներ՝ 4956.8 հազ. դրամ, պարգևատրություն՝ 228.0 հազ. դրամ, սոցիալական ապահովության վճարներ՝ 1164.2 հազ. դրամ, էներգետիկ ծառայություն՝ 71.4 հազ. դրամ, կապի ծառայություն՝ 185.4 հազ. դրամ, ապահովագրական ծախսեր՝ 5.0 հազ. դրամ, տեղեկատվական ծառայություններ՝ 49.4 հազ. դրամ, մասնագիտական ծառայություններ՝ 83.8 հազ. դրամ, գրասենյակային ապրանքներ՝ 50.0 հազ. դրամ, տրանսպորտային նյութեր՝ 955.0 հազ. դրամ (414.0 հազ. դրամը՝ պահստամասեր, 264.0 հազ. դրամը ավտոմեքենայի գազ, 277.0 հազ. դրամը՝ դիզ. վառելանյութ), հատուկ նպատակային այլ նյութեր՝ 328.0 հազ. դրամ, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 264.0 հազ. դրամ, սոցիալական օ•նություններ՝ 1000.0 հազ. դրամ, հիմնադրամներին նվիրատվություն՝ 51.0 հազ. դրամ, կապիտալ ծախսեր՝ 1930.0 հազար դրամ (ջրագծի վերանորոգում՝ 950.0 հազ. դրամ, ճանապարհի վերանորոգում՝ 950.0 հզ. դրամ և նախագծի արժեք՝ 30.0 հազ. դրամ):

Կատարված ծախսերի օրինականության ստուգման ժամանակ հայտնաբերվեց մի շարք թերություններ:

Աշխատողների աշխատանքի հաճախումների տաբելները լրացվում են թերություններով՝ համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 147-րդ հոդվածի ոչ աշխատանքային տոնական և հիշատակի օրերը նախորդ աշխատանքային օրերը տևողությունը կրճատվում է մեկ ժամով, սակայն տաբելներում աշխատաժամանակը 7 ժամվա փոխարեն դրված է 8 ժամ:

Խախտելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի պահանջները արձակուրդային գումարները վճարվում են ուշացումներով, ընդուված կարգի համաձայն արձակուրդային գումարները աշխատողին վճարվում են ոչ ուշ, քան արձակուրդ մեկնելուց 3 օր առաջ: Գնումներ կատարելու ժամանակ, բացառությամբ խմելու ջրի ջրագծի՝ 950.0 հազ. դրամ և ճանապարհների նորոգում՝ 950.0 հազ. դրամ, որոնք կատարվել են մրցակցային բանակցությունների եղանակով («Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ), մնացած բոլոր գնումների ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերը լրացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին ոչ համապատասխան: Չեն ներկայացվել հիմնավորումներ գնումների ձևը սահմանելու վերաբերյալ, գնման պայմանագրերը և օրենքով պահանջվող

ապրանքների տեխնիկական բնութագրերը, գնման և վճարման ժամանակացույցերը, մասնակիցների հայտարարությունը իր որակավորման, տեխնիկական և ֆինանսական միջոցների առկայության, հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով ժամկետանց պարտքեր չունենալու և օրենքով սահմանված այլ սահմանափակումների մասին: Կատարված գործարքներին չեն տրվում համապատասխան հաշվապահական ձևակերպումներ, խախտելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջները չեն կատարվում տարեկան հաշվեկշիռներ:

Գյուղապետարանը ստուգմամբ ընդգրկված ժամանակաշրջանում կրեդիտորական պարտքեր չի ունեցել:

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի ընթացքում Ղուրսալ համայնքի ավագանին ընդունել է 32 որոշում:

2010 թվականի ընթացքում Ղուրսալ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2011 թվայկանի համայնքի բյուջեն.

հաստատել է 2010 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները.

հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները.

2011 թվականի համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատել է դրանց մեկնարկային գները.

հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

համաձայնություն է տվել համայնքի անվանափոխության վերաբերյալ պետական լիազորված մարմնի առաջարկին:

հաստատել է 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Ավագանու որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, սակայն գյուղապետարանում փակցված չէ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

Համայնքի ավագանու նորմատիվ որոշումները օրենքով սահմանված կարգով ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն իրավական փորձաքննության:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ստուգման ժամանակ ավագանու որոշումներ տախտակին փակցված չէին: Առաջարկվել է համայնքի ավագանու որոշումները փակցնել ցուցատախտակին, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանող որոշումը և որոշման հավելվածը փակցրած պահել տարվա ընթացքում, ինչպես նաև ավագանու նստավայրում (գյուղապետարանում) փակցնել համայնքի ղեկավարի անհատական որոշումները: Քանի որ ցուցատախտակը գտնվում է գյուղապետարանի ներսում նպատակահարմար է ցուցատախտակ տեղադրել համայնքի բնակչության համար մատչելի ևս մեկ վայրում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ, ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՏԻՄ» ՀՀ օրենքի 43-րդ հոդված. սույն բնագավառում իրականացվել են հետևյալ կամավոր լիազորությունը՝ կազմակերպել է վճարովի հասարակական աշխատանքներ, միջոցներ է ձեռնարկել՝ օգնություն է տրամադրել համայնքի սոցիալական անապահով խավերի բարելավման ուղղությամբ: Ստուգման պահին առկա են եղել նշված բնակիչների դիմումները: Վճարովի հասարակական աշխատանքներում ներգրավված քաղաքացիների հետ կնքվել են անհատական որոշակի ժամկետով աշխատանքնային պայմանագրեր օրենսդրությամբ սահմանված կարգով: Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները, ինչպես նաև համայնքի ղեկավարը 2010 թվականի ընթացքում օգտվել են ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդային օրերից: Արձակուրդի վերաբերյալ կարգադրությունները համապատասխանում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 2005 թվականի թիվ 1384-Ն որոշման դրույթներին:

Համայնքի ղեկավարի կողմից կայացրած որոշումները հիմնականում վերաբերվում են «ՏԻՄ» օրենքի 38-րդ հոդվածով սահմանված հողօգտագործման բնագավառին, մասնավորապես համայնքի ղեկավարի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ 1 որոշմամբ ուղակի վաճառքով սեփականության իրավունքով օտարվել է 0.4 հա հողամաս էներգետիկայի ոլորտի նպատակով: Այն հողամասերը, որոնք տրվել են վարձակալությամբ սահմանված կարգով պայմանագրեր են կնքվել և հետագայում գրանցվել անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումում: Նշված որոշումներում պահպանվել են հողային օրենսդրությամբ սահմանված պահանջները:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի զինապարտների գրանցամատյան չի վարվում: Առաջարկվել է մարզպետարանի կողմից տրամադրված հաշվառված զինապարտների ցուցակի հիման վրա իրականացնել գրանցամատյանի վարման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 60 հավելվածով հաստատված Ղուրսալ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 4-ն են:

2. Համայնքի ղեկավարի 2010թ. ապրիլի 12-ի թիվ 06 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը :

3. Համայնքի ավագանու 20.12.2010թ. N27 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին: Հաստիքացուցակով նախատեսվել են նաև համայնքի ղեկավարի տեղակալի և օգնականի հայեցողական պաշտոններ: Վերլուծելով վերոնշյալ 2 պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը և նրանց իրականացրած գործառույթները հանձնաժողովը արձանագրում է, որ անհրաժեշտ է վերանայել գործող հաստիքացուցակը և կրճատել համայնքի ղեկավարի օգնականի հաստիքը:

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի

գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն աշխատանքային գրքույկներում գրառումները թերի են կատարվել, անձնական գործերի ներքին վերգիրները չեն համապատասխանում կարգի 18-րդ կետի պահանջներին: Վերը նշվածի, ինչպես նաև անձնական գործերում առկա այլ թերությունները վերացնելու համար տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

5. Համայնքի ղեկավարի կողմից խախտվել է<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ ենթակետի պահանջը և չի հաստատվել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը:

6. Համայնքի ղեկավարի 2009թ. մարտի 3-ի թիվ 05 որոշմամբ հաստատվել աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը և ուժը կորցրած է ճանաչվել համայնքի ղեկավարի 27.10.2008թ. թիվ 11 որոշումը, որը բոլորովին չի առընչվում թիվ 05 որոշման հետ:

7. Համայնքի ղեկավարի 2009թ. մարտի 3-ի թիվ 06 որոշմամբ հաստատվել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը և ուժը կորցրած է ճանաչվել համայնքի ղեկավարի 06.10.2008թ. թիվ 12 որոշումը, որը բոլորովին չի առընչվում թիվ 06 որոշման հետ: Անհրաժեշտ է վերանայել համայնքի ղեկավարի վերոնշյալ որոշումները << Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքին համապատասխան :

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ		Լ. Բերոյան	Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ
Հանձնաժողովի անդամներ		Ա. Սահակյան	Իրավաբանական բաժնի պետ
		Ժ. Ղազարյան	ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ
		Վ.Հովհաննիսյան	ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ
		Մ. Մինասյան	Ղուրսալ համայնքի ղեկավար
		Բ. Ավետիսյան	Ղուրսալ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար
		Ն. Ոսկանյան	Ղուրսալ համայնքի ղեկավարի շխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ

Ակտ

25.03.2011թ. **գ. Եղեգնուտ**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական եւ վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ եւ համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Եղեգնուտի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական եւ վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. մարտի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում՝ էին Եղեգնուտ համայնքի ղեկավար Մ. Հովհաննիսյանը, աշխատակազմի քարտուղար՝ Կ. Ավետիքյանը, հաշվապահ՝ Մ. Ալիխանյանը:

Գյուղապետարանի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, գյուղապետարանի կանոնադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով եւ այլ իրավական ակտերով:

Ստուգումը սկսվել է 24.03.2011թ.-ին , ավարտվել է՝ 25.03.2011թ.-ին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Բյուջեի եկամուտներ: 2010թ. բյուջեով նախատեսված 14547,5 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 13108,0 հազ. դրամ, կամ կատարվել են 90.1%-ով: Սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 64.6 %: Սեփական եկամուտների գծով թերակատարվել են հողի հարկի, գույքահարկի եւ այլ մուտքերի գանձման ցուցանիշները:

2011թ. մարտի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամտային մասը կատարվել է 87.2%-ով, այդ թվում սեփական եկամուտները հավաքագրվել են 56,6 %-ով: Բոլոր տեսակի սեփական եկամուտների գծով թերակատարվել են գանձման ցուցանիշները:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	2010թվական			Առ 01.03.2011թ.		
	Նախա-տեսված է	փաստացի	%	Նախա-տեսված է	Փաստացի	%
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**14547.5**	**13108.0**	**90.1**	**2362.4**	**2060.0**	**87.2**
Հողի հարկ	2971.3	1809.0	60.9	438.6	229.0	52.2
Գույքահարկ	357.0	344.1	96.3	133.3	69.0	51.7
Տեղական տուրք	34.0	66.0	194.1	15.0	2.0	13.3
Պահուստային հողերի վարձավճար.	405.7	410.4	101.1	110.5	95.0	85.9
Այլ մուտքեր	301.0	-	-	-	-	-
Ընդամենը սեփական եկամուտներ	**4069.0**	**2629.5**	**64.6**	**697.4**	**395.0**	**56.6**
Պետական բյուջից տրվող դոտացիա	9878.5	9878.5	100.0	1665.0	1665.0	100.0
Անասնաբուժական ծառ.(ֆին. պետ. բյուջեից)	600.0	600.0	100.0	-	-	-
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**14547.5**	**13108.0**	**90.1**	**2362.4**	**2060.0**	**87.2**

Համայնքի բյուջեի պարբերաբար թերակատարման հետեւանքով կուտակվել են ապառքներ: 01.01.2011թ. դրությամբ ապառքները կազմել են հողի հարկից՝ 6378.6 հազ. դրամ, գույքահարկից՝ 105.7 հազ. դրամ:

Համայնքի տարածքում գործում է երկու առեւտրի կետ: Ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանվել է տեղական տուրք եռամսյակը 3000 դրամ, ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ 3000 դրամ: Առկա ապառքներից մեր միջամտությունից հետո գանձվեց 36.0 հազ. դրամ: Թույլտվությունների տրման ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջը՝ չեն ներկայացվել թույլտվության հայտեր, չեն լրացվել սահմանված թույլտվության ձեւեր:

Առեւտրի եւ ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի եւ «Առեւտրի ու ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առեւտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

Բյուջեի ծախսեր: Դրամարկղային ծախսերը 2010թ. կազմել են 10458.9 հազ. դրամ, այդ թվում՝ աշխատավարձ եւ հավելավճարներ՝ 6761.7 հազ. դրամ, պարգեւատրումներ՝ 490.2 հազ. դրամ, սոցիալական ապահովության վճարներ՝ 1589.5 հազ. դրամ, էներգետիկ ծառայություն՝ 78.5 հազ. դրամ, կապի ծառայություններ՝ 79.0 հազ. դրամ, գործուղման ծախսեր՝ 100.0 հազ. դրամ, վարչական ծառայություններ՝ 90.0 հազ. դրամ, համակարգչային ծառայություններ՝ 120.0 հազ. դրամ, տեղեկատվական ծառայություններ՝ 31.0 հազ. դրամ, մասնագիտական ծառայություններ՝ 20.0 հազ. դրամ, գրասենյակային նյութեր՝ 150.0 հազ. դրամ, տրանսպորտային նյութեր՝ 144.0 հազ. դրամ, սոցիալական օգնություններ՝ 605.0 հազ. դրամ, հուշարձանի վերանորոգման ծախսեր՝ 150.0 հազ. դրամ, այլ ծախսեր՝ 50.0 հազ. դրամ:

2011թ. մարտի 1-ի դրությամբ դրամարկղային ծախսերը կազմել են 1386.9 հազ. դրամ, այդ թվում՝ աշխատավարձ եւ հավելավճարներ՝ 999.7 հազ. դրամ, պարգեւատրումներ՝ 60.0 հազ. դրամ, սոցիալական ապահովության վճարներ՝ 238.9 հազ. դրամ, էներգետիկ ծառայություն՝ 3.0 հազ. դրամ, կապի ծառայություններ՝ 6.0 հազ. դրամ, գործուղումներ՝ 16.8 հազ. դրամ, սոցիալական օգնություններ՝ 45.0 հազ. դրամ, այլ ծախսեր՝ 17.5 հազ. դրամ:

Ստուգման ժամանակ արձանագրվել են մի շարք թերություններ: Խախտելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջները, կատարված գործարքներին չեն տրվել համապատասխան հաշվապահական ձեւակերպումներ, չեն կազմվում ամսական, եռամսյակային եւ տարեկան ամփոփներ:

Աշխատանքի հաճախումների տաբելները լրացվում են թերություններով: Խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, համաձայն որի «ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տեւողությունը կրճատվում է մեկ ժամով»:

Համայնքում գործում է մանկապարտեզ, որտեղ 2010թ. հաճախել են 15 երեխա, 2011թ.-ին՝ 11 երեխա: Ծնողական գումարներ չեն սահմանվել եւ չեն գանձվում: Մնդի ծախսերը կատարվում է բարերարների հաշվին, իսկ մնացած ծախսերը կատարվում է համայնքի բյուջեից: Մանկապարտեզի տաբելներում որոշ դեպքերում տոնական օրերը դրված են ներկաներ(մարտի 8, հուլիսի 5): Թ. Բարսեղյանին աշխատանքից ազատելու ժամանակ չի հաշվարկվել վերջնահաշվարկ:

Մի շարք դեպքերում գնման պայմանագրերը եւ անհրաժեշտ մյուս փաստաթղթերը լրացվում են թերություններով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին ոչ համապատասխան:

Գրասենյակային ապրանքների ծախսերը հաստատող փաստաթղթերը լրացվում են թերություններով՝ չեն կազմվում պահանջագրեր եւ համապատասխան ակտեր:

Աշխատավարձերի եւ արձակուրդային վճարների հաշվարկների ընտրանքային ստուգմամբ պարզվեց, որ առանձին դեպքերում արձակուրդային վճարները հաշվարկվել են ոչ սահմանված կարգով, ինչի արդյունքում ավել է հաշվարկվել Վ. Շաքարյանին՝ 3655 դրամ, Կ. Ավետիքյանին՝ 1028 դրամ (միջին աշխատավարձի հաշվարկման ժամանակ խախտվել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի պահանջները):

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ավագանու իրավասությունների վերաբերյալ: 2010 թվականի ընթացքում Եղեգնուտ համայնքի ավագանին կայացրել է 8 նիստ, ընդունել է 18 որոշում: Երեք անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը՝ 2-րդ նիստը կայացել է 15.02.2010թ.-ին, 3-րդը՝ 02.07.2010թ.-ին, 4-րդը՝ 03.09.2010թ.-ին, 5-րդը՝ 18.11.2010թ.-ին:

2010 թվականի ընթացքում Եղեգնուտ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

- հաստատել է 2011 թվականի համայնքի բյուջեն.
- հաստատել է 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.
- ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի II եռամսյակի հաղորդումը.
- հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները.
- 2011 թվականի համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.
- հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.
- հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը.
- հաստատել է հողային հաշվեկշիռը:

2010 թվականի բյուջեի համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունների փոխարեն երկու անգամ հաստատվել է համայնքի 2010թ. բյուջեն:

Ավագանու թիվ 6-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, գյուղապետարանում փակցված է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

Համայնքի ավագանու նորմատիվ որոշումները օրենքով սահմանված կարգով ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն իրավական փորձաքննության:

Համայնքի ավագանու որոշումների նախաբաններում հիմնականում չեն կատարվում նշումներ, թե ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի համաձայն կամ ի կատարումն են ընդունվում այդ որոշումները:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ստուգման ժամանակ ավագանու որոշումներ տախտակին փակցված չէին: Ըստ աշխատակազմի քարտուղարի հայտարարության ավագանու որոշումները փակցվում են 2 - 3 շաբաթ ժամկետով, իսկ համայնքի ղեկավարի անհատական որոշումները ցուցատախտակին չեն փակցվում: Առաջարկվել է համայնքի ավագանու որոշումները փակցնել ավելի երկար ժամկետով, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանող որոշումը և որոշման

հավելվածը փակցրած պահել տարվա ընթացքում, ինչպես նաև ավագանու նստավայրում (գյուղապետարանում) փակցնել համայնքի ղեկավարի անհատական որոշումները:

Չի վարվում ՀՀ կառավարության 2002 թվականի թիվ 1446-Ն որոշմամբ սահմանված կարգով համայնքի աշխատակազմի իրավական ակտերի հաշվառման մատյանը:

Եղեգնուտ համայնքի ղեկավարի աշխատակազմի կադրային գործի վարման վերաբերյալ: Իրականացված վարչական վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1.ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 28 հավելվածով հաստատված Եղեգնուտ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 3-ն են:

2. Համայնքի ղեկավարի 2010թ. ապրիլի 15-ի թիվ 09 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը :

3. Համայնքի ավագանու 15.12.2010թ. N15 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին: Հաստիքացուցակով նախատեսվել են նաև համայնքի ղեկավարի տեղակալի և օգնականի հայեցողական պաշտոններ, որոնք թափուր են:

Հաշվի առնելով համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների աշխատանքային ծանրաբեռնվածությունը և նրանց իրականացրած գործառույթները հանձնաժողովը արձանագրում է, որ անհրաժեշտ է վերանայել գործող հաստիքացուցակը և կրճատել համայնքի ղեկավարի օգնականի հաստիքը:

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 07.11.2006թ. N 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան:

5. <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

Համայնքի ղեկավարի 2010 թվականի հոկտեմբերի 5-ի N 30 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի նոր աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը, որին ծանոթացած լինելու մասին իրենց ստորագրությամբ հավաստել են աշխատակազմի միայն համայնքային ծառայողները:

Այս առումով՝ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ աշխատակազմի կարգապահական ներքին կանոնակարգը աշխատակազմի բոլոր աշխատակիցներին պատշաճ իրազեկում ապահովելու ուղղությամբ:

6.<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի 9-րդ մասի և <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համայնքային ծառայողների նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու իրավասություն ունի նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ այս դեպքում աշխատակազմի քարտուղարը:

Սակայն համայնքի ղեկավարը խախտելով վերոնշյալ օրենքների պահանջները աշխատակազմի համայնքային ծառայողների (առաջատար մասնագետ-հաշվապահին և

առաջատար մասնագետին) նկատմամբ ինքն է կիրառել խրախուսման միջոցները՝ նրանց հատկացնելով միանվագ դրամական պարգևատրումներ:

7. ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից 2010 թվականին համայնքի ղեկավարի աշխատակազմի կադրային գործի վարման նկատմամբ իրականացված վերահսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ տարվել են զգալի աշխատանքներ, ինչի արդյունքում հայտնաբերված թերությունները ընդհանուր առմամբ վերացվել են:

Պաշտպանության կազմակերպման բնագավառ: Համայնքի զինապարտների գրանցամատյան չի վարվում: Առաջարկվել է մարզպետարանի կողմից տրամադրված հաշվառված զինապարտների ցուցակի հիման վրա իրականացնել գրանցամատյանի վարման աշխատանքները:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆին. եւ սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Եղեգնուտ համայնքի ղեկավար

---------- Մ. Հովհաննիսյան

Անդամներ

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ եւ
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Եղեգնուտ համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար

---------- Կ. Ավետիքյան

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Եղեգնուտ համայնքի աշխ-կազմի
առաջ, մասնագետ՝ հաշվապահ

---------- Մ. Ալիխանյան

Ֆին. եւ սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Ակտ

31.03.2011թ. **գ. Շահումյան**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական եւ վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ եւ համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Շահումյանի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական եւ վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Շահումյան համայնքի ղեկավար Է. Մանուկյանը, աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Մինասյանը, հաշվապահ՝ Հ. Սոսյանը:

Ստուգումը սկսվել է 28.03.2011թ.-ին , ավարտվել է՝ 31.03.2011թ.-ին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Բյուջեի եկամուտներ: 2010թ. բյուջեով նախատեսված 42530.8 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 42295.0 հազ. դրամ, կամ կատարվել են 99.4%-ով: Սեփական եկամուտները նախատեսված 8708.1 հազ. դրամի դիմաց կազմել է 8472.3 հազ. դրամ, կամ հավաքագրումը կազմել է 97.3%:

Սեփական եկամուտների գծով թերակատարվել են հողի հարկի, գույքահարկի և պահուստային հողերի վարձավճարների գանձման ցուցանիշները:

2011թ. մարտի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտները կատարվել է 99.7%-ով, այդ թվում սեփական եկամուտները հավաքագրվել են 98.7 %-ով: Թերակատարվել են գույքահարկի, պահուստային հողերի վարձավճարների եւ այլ մուտքերի գանձման ցուցանիշները:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	**2010թվական**			**Առ 01.03.2011թ.**		
	Նախա-տեսված է	փաստացի	%	Նախա-տեսված է	Փաստացի	%
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**42530.8**	**42295.0**	**99.4**	**7050.5**	**7032.2**	**99.7**
Հողի հարկ	5001.9	3725.7	74.5	643.3	804.4	125.0
Գույքահարկ	2644.0	2024.4	77.3	566.7	342.9	60.5
Տեղական տուրք	120.0	1211.6	1009	20.0	189.2	946.0
Պահուստային հողերի վարձավճար.	912.2	899.5	98.6	182.5	82.7	45.3
Այլ մուտքեր	30.0	611.1	2037	50.0	25.0	50.0
Ընդամենը սեփական եկամուտներ	**8708.1**	**8472.3**	**97.3**	**1462.5**	**1444.2**	**98.7**
Պետական բյուջից տրվող դոտացիա	33222.7	33222.7	100.0	5588.0	5588.0	100.0
Անասնաբուժական ծառ.(ֆին. պետ. բյուջեից)	600.0	600.0	100.0	-	-	-
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**42530.8**	**42295.0**	**99.4**	**7050.0**	**7032.2**	**99.7**

Համաձայն բյուջեի կատարման տարեկան հաշվետվության տեղական տուրքերի գանձումները գերակատարվել են շուրջ 10 անգամ, իսկ շենք և շինությունների համար նախատեսված գույքահարկի գանձումները նախատեսված 1167.7 հազ. դրամի դիմաց կազմել է 430.1 հազ. դրամ, կամ կատարվել է 36.8%-ով: Ստուգման ժամանակ պարզվեց, որ 2010թ. հունվարի 1-ից 2011թ. մարտի 31-ը ընկած ժամանակաշրջանում քաղաքացիներից գանձված շենք և շինությունների գույքահարկի գումարներից 1277.8 հազ. դրամ մուտքագրվել է համայնքի բյուջե որպես տեղական տուրք, ինչի արդյունքում տեղական տուրքերի գանձումները գերակատարվել են, իսկ գույքահարկի գանձումները թերակատարվել:

Համայնքի տարածքում գործում է 9 առեւտրի կետ, 1 հանրային սննդի օբյեկտ, 1 խաղատուն: Ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանվել է տեղական տուրք եռամսյակը 3000 դրամ, ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ 2000 դրամ, շահումով խաղերի կազմակերպման համար տարեկան 250000 դրամ:

Թույլտվությունների տրման ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջը՝ չեն ներկայացվել թույլտվության հայտեր, չեն լրացվել սահմանված թույլտվության ձեւեր:

Նախորդ տարվանից տեղական տուրքերի գծով պարտքեր ունեն ա/ձ Հարություն Աղաջանյանը(<Մոնակո> խաղատուն)՝ 500.0 հազ. դրամ և <Մուշ ռեստորան> ՍՊԸ՝ 18.0 հազ. դրամ: Նշված կազմակերպությունները չունենալով համապատասխան թույլտվություն վարում են անօրինական գործունեություն:

Առեւտրի եւ ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի եւ «Առեւտրի ու ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առեւտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ: Մասնավորապես <Վարչական իրավախախտումների մասին> ՀՀ օրենքի 169 հոդվածի համաձայն առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեության իրականացումը առաջացնում է տուգանք ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի համար՝ 20000-50000 դրամ, խաղատների համար՝ 200000-300000 դրամ:

Համայքի տարածքում փաստացի գործում է խաղատուն եւ ավագանու որոշմամբ թույլտվության համար սահմանվել է 250.0 հազ. դրամ տեղական տուրք, սակայն համայնքի 2010թ. և 2011թ. բյուջեներով նշված հոդվածով տուրքի գումարների չի նախատեսված: Նույն կարգով 2010թ. բյուջեով գումարներ չի նախատեսված նաև 2010թ. մայիսի 25-ի թիվ 08-Ն որոշմամբ համայնքի կողմից մատուցված ծառայությունների համար մի շարք տեղական վճարների գծով:

Քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի կողմից տրվել է 2 քանդման և 7 շինարարության թույլտվություններ, որի համար գանձվել է 26,0 հազ. դրամ տեղական տուրք:

Նախորդ տարիներին համայնքի բյուջեի պարբերաբար թերակատարման հետեւանքով կուտակվել են ապառքներ, որոնք 01.01.2011թ. դրությամբ կազմում են հողի հարկից՝ 18999.9 հազ. դրամ, գույքահարկից՝ 3379.0 հազ. դրամ (շինություններից՝ 2172,5 հազ. դրամ, փոխադրամիջոցներից՝ 1206,5 հազ. դրամ):

Խոշոր չափի ապառքներ ունեն <Մուշ> ռեստորանային համալիրը՝ 738.0 հազ. դրամ (գույքահարկի), <Ին Ընդ Աութ> ՍՊԸ՝ 311.0 հազ. դրամ(գույքահարկ),

Աննա Տեր Մովսիսյանը՝ 527.2 հազ. դրամ(գույքահարկ), Ֆեներա Մանուկյան՝ 3325.3 հազ. դրամ(հողի հարկ): Մեր կողմից համայնքի ղեկավարին առաջարկվել է ապառք ունեցողների հետ կնքել պարտքերի մարման ժամանակացույց, կամ գումարները գանձել դատական կարգով:

Հողի օտարումներից մուտքերը կազմել են 13838.1 հազ. դրամ, որից ՀԲԸՄ երիտասարդական միության կողմից՝ 13797.0 հազ. դրամ(հողերի նպատակային նշանակության փոփոխման հետևանքով կադաստրային արժեքների տարբերություն), Տանյա Մանվելովայից՝ 11,9 հազ. դրամ(ուղղակի վաճառք), Արտեմ Գոքորյանից՝ 29,2 հազ. դրամ(աճուրդ վաճառք):

Բյուջեի ծախսեր: Դրամարկղային ծախսերը 2010թ. կազմել են 51734.9 հազ. դրամ, այդ թվում՝ աշխատավարձ եւ հավելավճարներ՝ 19082,3 հազ. դրամ, պարգեւատրումներ՝ 1010,0 հազ. դրամ, սոցիալական ապահովության վճարներ՝ 3725,7 հազ. դրամ, էներգետիկ ծառայություն՝ 898,3 հազ. դրամ, կոմունալ ծառայություններ՝ 210,0 հազ. դրամ, կապի ծառայություններ՝ 221,7 հազ. դրամ, գործուղման ծախսեր՝ 138,4 հազ. դրամ, համակարգչային ծառայություններ՝ 57,0 հազ. դրամ, տեղեկատվական ծառայություններ՝ 37.0 հազ. դրամ, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 378,0 հազ. դրամ, մասնագիտական ծառայություններ՝ 510.0 հազ. դրամ, գրասենյակային նյութեր՝ 750.0 հազ. դրամ, տրանսպորտային նյութեր՝ 1866,0 հազ. դրամ, կենցաղային և հանրային սննդի նյութեր՝ 50,0 հազ. դրամ, հատուկ նպատակային այլ նյութեր՝ 2280,0 հազ. դրամ, դրամաշնորհներ՝ 550,0 հազ. դրամ, սոցիալական օգնություններ՝ 3650,0 հազ. դրամ, այլ ծախսեր՝ 647,5 հազ. դրամ, շենքերի եւ շինությունների ընթացիկ նորոգումներ՝ 1850,0 հազ. դրամ, կապիտալ ծախսեր՝ 13760,0 հազ. դրամ, այլ ծախսեր՝ 63.0 հազ. դրամ:

Դրամարկղային գործունեությունը վարվում է թերություններով, դրամարկղի գիրքը կնքված չէ տարածքային հարկային տեսչության կողմից, դրամարկղի մուտքի անդորրագրերով գանձված պահուստային հողերի վարձավճարները, տեղական տուրքերը և վճարները չեն մուտագրվել գյուղապետարանի դրամարկղ, նշված անդորրագրերը չեն գրանցված դրամարկղի գրքում, դրամարկղի ելքի անդորրագրերը համարակալված չէին:

Խախտվել է <Դրամարկղային գործառնությունների մասին > ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 08.10.2003թ. թիվ 1408 –Ն որոշման պահանջը(<Դրամարկղային գործառնույթների իրականացման կարգ>): Համաձայն <Դրամարկղային գործառնությունների մասին > ՀՀ օրենքի դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելու և դրամարկղային գործառնությունները դրամարկղի գրքում չգրանցելու դեպքում նախատեսված է տուգանքներ 20000-100000 դրամի չափով:

Աշխատանքի հաճախումների տաբելները լրացվում են թերություններով: Խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, համաձայն որի «ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տեւողությունը կրճատվում է մեկ ժամով»:

Ա. Մանուկյանի աշխատանքի ազատման ժամանակ չօգտագործված արձակուրդի դիմաց տրվող փոխհատուցման գումարները հաշվարկվելու ժամանակ օրերի քանակը ավել է հաշվարկվել 1 օր, ինչի արդյունքում ավել է հաշվարկվել 4384 դրամ:

Ապրանքանյութական արժեքների շրջանառության գրքում ապրանքանյութական արժեքների ամբողջ շարժը չի գրանցվում, գրանցված է միայն բենզին և դիզելային վառելիքի շարժը:

Դիզելային վառելիքի և բենզինի ծախսերը հիմնավորելու համար կազմվել են համապատասխան ակտեր, սակայն ակտերում բացակայում են կատարված ծախսերի հաշվարկները, որոնք նույնպես հանդիսանում են հիմնավորող փաստաթղթեր:

Գնված 116.0 հազ. դրամ ավտոպահեստամասերի ծախսերը հիմնավորելու համար բացակայում են համապատասխան թերությունների և տեղադրման ակտեր:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ավագանու իրավասություն: 2010 թվականի ընթացքում Շահումյան համայնքի ավագանին կայացրել է 10 նիստ, ընդունել է 31 որոշում:

2010 թվականի ընթացքում Շահումյան համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2011 թվականի համայնքի բյուջեն.

հաստատել է 2010 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

հաստատել է 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները.

հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները.

սահմանել է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը

2011 թվականի համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատել է դրանց մեկնարկային գները.

հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը.

հաստատել է հողային հաշվեկշիռը:

Թիվ 4-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, գյուղապետարանում փակցված է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

Համայնքի ավագանու նորմատիվ որոշումները օրենքով սահմանված կարգով ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն իրավական փորձաքննության:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ստուգման ժամանակ ավագանու որոշումները փակցված էին ցուցատախտակին: Առաջարկվել է ավագանու նստավայրում (գյուղապետարանում) փակցնել համայնքի ղեկավարի անհատական որոշումները:

ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգով վարվում է ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյաններ:

Պաշտպանության կազմակերպման բնագավառ: Համայնքի զինապարտների գրանցամատյանի վարման աշխատանքները ընթացքի մեջ են: Մատյանում գրառումներ է կատարվել համայնքում հաշվառված զինապարտների վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տվյալների հիման վրա, դեռևս չի վերցվել զինկոմիսարիատի կողմից տրամադրվող տվյալները:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կադրային գործի վարման վերաբերյալ: Իրականացված վարչական վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1.ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 76 հավելվածով հաստատված Շահումյան գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 10-ն են:

2. Համայնքի ղեկավարի 2010թ. մարտի 15-ի թիվ 14-Ա որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը :

3. Համայնքի ավագանու 29.11.2010թ. N 27-Ա որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 07.11.2006թ. N 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն անձնական գործերի ներքին վերգիրների գրառումները թերի են կատարվել և չեն համապատասխանում կարգի 18-րդ կետի պահանջներին: Վերը նշվածի, ինչպես նաև անձնական գործերում առկա այլ թերությունները վերացնելու համար տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

5. ՀՀ տարածքային կառավարման նախարարի 29.08.2006թ. N 13-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգի 16-րդ կետի համաձայն աշխատակազմում վարվում է մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյան, սակայն մատյանում գրառումները թերի են կատարվել:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆին. եւ սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Շահումյան համայնքի ղեկավար

---------- Է. Մանուկյան

Անդամներ՝

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ եւ
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Շահումյան համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար

---------- Ռ. Մինասյան

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակագման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Ֆին. եւ սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Շահումյան համայնքի աշխ-կազմի
առաջ, մասնագետ՝ հաշվապահ

---------- Հ. Սոսյան